

Վանաձոր համայնքի 2012 թ. սեպտեմբերի 9-ի ՏԻՄ ընտրությունների դիտորդության արդյունքների ամփոփում

Հելսինկյան Քաղաքացիական
Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ
ՀՀ, ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 59
Հեռ. +37432242268
Ֆաքս +37432241236

Սույն հրապարակումը հնարավոր է դարձել իրականացնել Քաունթերփարթ ինթերնեշնլի հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող Քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման աջակցության ծրագրի և Ամերիկայի Միացյալ Նահանգների բնակչության առատաձեռն աջակցության շնորհիվ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության գործընկերության պայմանագրի շրջանակներում՝ «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի» միջոցով՝ «2012 թ. տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների նկատմամբ քաղաքացիական վերահսկողության կարողությունների զարգացում» ծրագրի շրջանակներում: Սույնի բովանդակությունը, արտահայտված տեսակետերը և կարծիքները պատկանում են հեղինակին՝ «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակին», և հնարավոր է, որ չհամընկնեն Քաունթերփարթ ինթերնեշնլի հայաստանյան ներկայացուցչության, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և ԱՄՆ կառավարության տեսակետերի հետ:

Բովանդակություն

Նախաբան 5

Քվեարկության կազմակերպումը և ընթացքը տեղամասում 8

Իրավիճակը տեղամասի շրջակայքում 16

Ձայների հաշվարկ 19

Քվեարկության օրը հայտնաբերված խախտումների վերաբերյալ կազմակերպության կողմից իրականացված գործողություններ 21

Հավելված 1. Ընտրողներին տեղափոխող որոշ մեքենաների լուսանկարներ 24

Հավելված 2. Գրություն ՀՀ Ոստիկանությանը և ՀՀ Կենտրոնական ընտրական հանձաժողովին՝ միկրոավտոբուսներով ընտրողներին տեղափոխելու վերաբերյալ 25

Հավելված 3. Գրություն ՀՀ Կենտրոնական ընտրական հանձաժողովին՝ անձնագրերը կնիքելու համար նախատեսված թանաքի ցնդելու վերաբերյալ 30

Հավելված 4. Գրություն ՀՀ ընտրատարածքային ընտրական հանձաժողովին՝ Տ. Ապրեսյանի շտաբից ստացված ահազանգի վերաբերյալ 31

Հավելված 5. Գրություն ՀՀ ընտրատարածքային հանձնաժողովին՝ կուտակումների վերաբերյալ 32

Հավելված 6. News.am տեղեկատվական կայքից ստացված ինֆորմացիայի վերաբերյալ քննություն 34

Նախաբան

2012 թ. սեպտեմբերի 9-ին Հայաստանի Հանրապետության 5 մարզերի 481 համայնքներում տեղի ունեցան տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ, այդ թվում՝ համայնքի ղեկավարի ընտրություններ 379 և համայնքի ավագանու ընտրություններ 454 համայնքում: Լոռու մարզի Վանաձոր համայնքում համայնքի ղեկավարի պաշտոնի համար պայքարում էին 5 թեկնածու, իսկ համայնքի ավագանու կազմում ընդգրկվելու համար պայքարում էին 52 թեկնածու: Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը 31 դիտորդների միջոցով դիտորդական առաքելություն է իրականացրել Վանաձոր համայնքի բոլոր 58 տեղամասերում:

Վերջին՝ խորհրդարանական ընտրությունների ընթացքում իրականացրած դիտորդական առաքելությունից ակնհայտ դարձավ, որ եթե Հայաստանում ընտրական գործընթացները մեկ քայլ առաջ էին, ապա միայն ավելի կատարելագործված ընտրակեղծիքների կիրառման առումով, ինչի շնորհիվ իշխող կուսակցությանը հաջողվեց բացարձակ մեծամասնություն ձեռք բերել ՀՀ Ազգային ժողովում: Նաև ակնհայտ դարձավ, որ ավանդական՝ տեղամասային դիտորդական առաքելությունը թեև հնարավորություն է տալիս կանխելու ընտրական գործընթացի խախտումներն ընտրատեղամասերում և դրականորեն է ազդում տեղամասային ընտրական հանձնաժողովների վարքի վրա, սակայն այն ակնհայտորեն չի օգնում ընդհանուր առմամբ վերացնել ընտրախախտումներն ու ընտրակեղծիքները, որոնք վերջին ընտրությունների ընթացքում տեղափոխվեցին տեղամասերից դուրս՝ հարակից տարածք կամ նախընտրական շտաբեր:

Հաշվի առնելով այս նկատառումները՝ Վանաձոր համայնքի ՏԻՄ ընտրությունների ընթացքում ՀՔԱ Վանաձորի կողմից դիտորդական առաքելությունն իրականացվեց այլ մեթոդաբանությամբ, որի նպատակն էր դիտարկել ընտրական գործընթացը ոչ միայն տեղամասերի ներսում, այլ նաև հարակից տարածքում՝ գնահատելու ընտրությունների իրականացման վրա ազդող բոլոր գործոնները:

Դիտորդական առաքելության գործընթացն այսպիսով ըստ վայրի կարելի է բաժանել երեք մասի.

1. <u>Նախընտրական շտաբերի և ընտրատեղամասերի հարակից տարածք</u> – Ի տարբերություն խորհրդարանական ընտրությունների, այս դեպքում ՀՔԱ Վանաձորի գրասենյակը կարևորել է շրջիկ դիտորդների ներգրավումը, որոնք շրջել են ընտրատեղամասերի շրջակայքում՝ փորձելով բացահայտել քաղաքացիների

քվեարկության գործընթացի վրա ազդելուն միտված ցանկացած անօրինական գործողություն:

2. <u>Ընտրատեղամասերի ներսում</u> – Քվեարկության օրը կազմակերպության դիտորդներն այցելել են բոլոր տեղամասերը, ուսումնասիրել շրջակայքը և գնահատելով իրավիճակը՝ տեղամասերում անցկացրել 1-3 ժամ: Այնուհետև, ըստ օրվա ընթացքում ուսումնասիրված իրավիճակի, ընտրվել են 12 տեղամասեր, որտեղ դիտարկվել է նաև ձայների հաշվարկը:
3. <u>ՀՔԱ Վանաձորի գրասենյակ</u> – ՀՔԱ Վանաձորի գրասենյակում մշտապես գտնվել է իրավաբաններից և դիտորդներից բաղկացած արագ արձագանքման խումբ, որն ահազանգի դեպքում մեկնել է տեղամաս՝ իրավիճակի հետ տեղում ծանոթանալու համար, ինչպես նաև գրություններ է ուղարկել ՀՀ Կենտրոնական և Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներ և ՀՀ Ոստիկանություն: Դիտարկված խախտումները կանոնավոր կերպով արձանագրվել են գրասենյակի կողմից և օրվա տարբեր ժամերի ամփոփ տարածվել են՝ մամլո հաղորդագրության տեսքով:

Նախընտրական քարոզչության ընթացքում՝ 2012 թ. օգոստոսի 15-ին Վանաձոր համայնքի ղեկավարի թեկնածու Տարոն Ապրեսյանը դիմել է ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողով՝ պահանջելով վերանայել Տիգրան Պապանյանին թիվ 30 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ նշանակելու որոշումը, քանի որ վեջինս «հանդիսանում է Վանաձոր քաղաքի քաղաքապետարանի ճարտարապետության եւ քաղաքաշինության բաժնի պետ եւ Վանաձորի քաղաքապետ, համայնքի ղեկավարի թեկնածու Սամվել Դարբինյանի հետ գտնվում է բարեկամական կապի մեջ (քրոջ ամուսինն է)»:[1] 2012թ. սեպտեմբերի 3-ին ստացվել է կենտրոնական ընտրական հանձնաժողովի մերժումը: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի մերժումում նշվում է, որ «Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների անդամներ և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների առաջին նիստեր նշանակելու մասին» 2011թ· օգոստոսի 15-ի իր որոշման ընդունումից հետո մինչ օրս առկա չեն այնպիսի հանգամանքներ, որոնք սահմանափակում կամ արգելում են Տիգրան Պապանյանին հանդիսանալու հանձնաժողովի անդամ: Ըստ հանձնաժողովի, ներկայացված դիմումում անգամ չի նշվում որևէ հիմք, փաստարկ, հանգամանք, որն օրենքին համապատասխան կարող է հիմք հանդիսանալ Պապանյանի լիազորությունները դադարեցնելու համար: Դիմումատուն ընդամենը վկայակոչում է ապագայում հնարավոր խախտումների վերաբերյալ իր կասկածները կամ դատողությունները, ինչը, Ընտրական օրենսգրքի պահանջներին համապատասխան, չի կարող դիմումը բավարարելու հիմք հանդիսանալ:[1]

[1] http://www.lragir.am/armsrc/country70631.html

2012 թ. օգոստոսի 26-ին, Վանաձոր համայնքի ղեկավարի թեկնածու Կարեն Թումանյանն ահազանգել է, որ Վանաձորի Տիգրան Մեծ-Մյասնիկյան խաչմերուկում պատռվել են թեկնածուի նախընտրական պաստառները: Նույն օրը՝ ժամը 15:00-ին, Կ. Դեմիրճյան 21 շենքի բակում Կարեն Թումանյանի նախընտրական հանդիպումը խոչընդոտել և հանդիպման մասնակիցներին ահաբեկել է անսթափ վիճակում գտնվող մի քաղաքացի՝ 30-390 պետհամարանիշով նիվա մակնիշի սպիտակ մեքենայով: Փաստի կապակցությամբ հաղորդում է ներկայացվել ՀՀ Ոստիկանության Վանաձորի բաժին: Ավելի ուշ պարզվել է, որ անհայտ անձը քաղաքապետի եղբոր փեսան է:[2] Նշված հանդիպմանը ներկա է եղել նաև ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ղեկավարը, որը բացատրության համար հրավիրվել է Վանաձորի ոստիկանության բաժին միայն 2012 թ. սեպտեմբերի 15-ին:

2012 թ. սեպտեմբերի 9-ին՝ բուն քվեարկության օրը, հիմնական ահազանգերը վերաբերել են քաղաքացիներին ընտրատեղամասեր տեղափոխելուն և ուղղորդելուն: Ստացված ահազանգերի վերաբերյալ ՀՔԱ Վանաձորի գրասենյակը ուղարկել է 4 գրություն, որից 3-ը ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովին, 1 գրության պատճեն ուղարկվել է նաև ՀՀ Ոստիկանապետին), նույն գրությունը առանձին ուղարկվել է նաև ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահին՝ նպատակ ունենալով հնարավորինս արագացնելու խախտման վերացումը: ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովից մինչ օրս պատասխան չի ստացվել, ընտրատեղամասային ընտրական հանձնաժողովից նույն օրը պատասխան է ստացվել, որ սույն խնդրի կարգավորումն իրենց ֆունկցիաների մեջ չի մտնում, իսկ անձանագրված խախտումները վերացնելու վերաբերյալ գրությանը ոստիկանությունը պատասխանել է միայն ընտրություններից 4 օր անց:

Ակնհայտ է, որ թե նախընտրական դեպքերի, թե 2012 թ. սեպտեմբերի 9-ին՝ քվեարկության օրը, տեղի ունեցած խախտումների վերաբերյալ գրությունները պատշաճ ուշադրության չեն արժանացել և ժամանակին չեն քննվել՝ այսպիսով բացառելով տվյալ խախտումների և նրանց հետևանքների կանխարգելման հնարավորությունը:

Կազմակերպության կողմից ձեռնարկված գործողությունների և պատասխանների վերաբերյալ ավելի մանրամասն կներկայացվի «Քվեարկության օրը հայտնաբերված խախտումների վերաբերյալ կազմակերպության կողմից իրականացված գործողություններ» բաժնում:

[2] http://www.hraparak.am/80409/

Քվեարկության կազմակերպումը և ընթացքը տեղամասում

Ընտրատեղամասի ներսում դիտարկումն իրականացվել է կազմակերպության կողմից մշակված դիտարկման քարտի միջոցով, որի նպատակն է եղել արձանագրել քվեարկության կազմակերպումը և անցկացումը: Քվեարկության օրը լրացվել է տեղամասերի դիտարկման 59 քարտ (որոշ տեղամասեր դիտարկվել են մեկից ավելի անգամ): Քվեարկության սկիզբը դիտարկվել է Վանաձոր համայնքի 21 տեղամասում, որոնցից 30/27 տեղամասում չհրկիզվող պահարանը բացվել է մինչև հանձնաժողովի բոլոր անդամների ժամանումը, այլ դիտարկված տեղամասերում մինչև տեղամասի բացումը խնդիրներ կամ խախտումներ չեն գրանցվել: Տեխնիկական պատճառներով դիտարկված տեղամասերից երկուսի վերաբերյալ տվյալները հայտնի չեն, այդ պատճառով ներկայացվում են դիտարկված տեղամասերից 56-ը:

Տեղամասային կենտրոնի մատչելիությունը շարժողական խնդիրներ ունեցող անձանց համար

Թեև դիտարկված տեղամասերից 9-ն (16%) է գտնվել շենքի երկրորդ հարկում, իսկ մյուս 47-ը (84%) 1-ին հարկում, սակայն դրանցից միայն 18-ն (30%) է դիտորդների կողմից մետչելի համարվել, հաշմանդամության սայլակով տեղաշարժվող անձանց համար: Դիտորդների մի մասը նշել է, որ հաշմանդամ ընտրողների ժամանման դեպքում հանձնաժողովները նախատեսել են կազմակերպել քաղաքացու քվեարկությունը տեղամասի մուտքի մոտ, սակայն մեր գնահատմամբ այդ քայլը չի կարող փոխարինել հաշմանդամություն ունեցող անձի համար քվեարկության լիարժեք գաղտնիություն, ինքնուրույնություն և արժանապատվությունը չոտնահարող պայմաններ ստեղծելու անհրաժեշտությանը:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի կազմը և գործառույթները

Տեղամասային ընտրական հանձնաժողովները 8 տեղամասերում բաղկացած են եղել 7 անդամից, իսկ մյուս 48 տեղամասերում՝ 8 անդամից: Դիտարկված բոլոր տեղամասերում հանձնաժողովի անդամների գործառույթներն իրականացվել են վիճակահանությամբ: Թիվ 30/27 և թիվ 30/47 տեղամասերում դիտորդներն արձանագրել են, որ տվյալ հաստատությունների տնօրենները (թիվ 9 դպրոց, թիվ 1 մանկապարտեզ), լինելով հանձնաժողովի անդամ, գերազանցել են իրենց լիազորությունները և հանդես եկել տեղամասում ընտրական գործընթացը ղեկավարողի դերում, ինչպես նաև փորձել են սահմանափակել դիտորդների և վստահված անձանց տեղաշարժվելու հնարավորությունը: Այս առումով ՀՔԱ Վանաձորի գրասենյակը կրկին առաջարկում է որպեսզի վերանայվի տեղամասային ընտրական հանձնաժողովների ձևավորման կարգը և տեղամասային ընտրական հանձնաժողովների բոլոր

անդամները լինեն այլ համայնքից: ՀՔԱ Վանաձորի գրասենյակի դիտորդներն արձանագրել են, որ հանձնաժողովի անդամները երբեմն չեն տիրապետել իրենց գործառույթներին, ինչը լրացուցիչ խոչընդոտներ է ստեղծել ընտրական գործընթացի սահուն իրականացման համար: Օրինակ՝

- Թիվ 30/20 տեղամասում ծրարները և անձնագիրը կնքող հանձնաժողովի անդամը ընտրողներից մեկի անձնագիրը պատահաբար կնքել է ծրարների համար նախատեսված կնիքով: Այս փաստը գրանցամատյանում չի արձանագրվել:
- Թիվ 30/25 տեղամասում ընտրողներին հաճախակի տրվել են միևնույն գույնի ծրարներ, դիտորդների և վստահված անձանց նկատողությունից հետո միայն հատկացվել են համապատասխան գույնի ծրարներ:
- Թիվ 30/31 տեղամասում հանձնաժողովի անդամը (քվեատուփի պատասխանատուն) մի քանի քաղաքացիներից մինչև քվեարկություն իրականացնելը վերցրել է անձնագրերը և քվեարկելուց հետո վերադարձրել դրանք՝ արդեն կնքված վիճակում:
- Թիվ 30/32 տեղամասում հանձնաժողովի անդամը մի քանի անգամ մոռացել է ընտրողին ստորագրել տալ ընտրացուցակում և միայն քվեարկելուց հետո են ընտրողին ետ կանչել ստորագրելու:
- Թիվ 30/32 տեղամասում Հանձնաժողովի անդամը ինքն է վերցրել ծրարները, կնքել և գցել քվեատուփի մեջ:

<u>Քվեարկության ընթացքին հետևող այլ կառույցներ</u>

Դիտարկված տեղամասերից 13-ում ընտրությունները դիտարկել են նաև դիտորդներ այլ կազմակերպություններից: Այդ տեղամասերից 4-ը դիտարկվել են նաև միջազգային դիտորդների կողմից: Ի դեպ, դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպություններից մեկի՝ «Իրավակիրթ հասարակություն» ՀԿ-ի դիտորդները որոշ տեղամասերում ՀՔԱ Վանաձորի գրասենյակի դիտորդներին ներկայացել են, որպես Բարգավաճ Հայաստան կուսակցության դիտորդներ: Դիտարկված տեղամասերից 31-ում ընտրական գործընթացին հետևել են նաև լրագրողներ, որոնց մի մասը դիտորդների դիտարկմամբ կրկին ներկայացրել է Բարգավաճ Հայաստան կուսակցությունը և լրագրողական առաքելություն չի իրականացրել:

Օրինակ՝ թիվ 30/13 տեղամաս է եկել փաստաթղթերի անհամապատասխանությամբ լրագող, որը ներկայացել է իրեն որպես «Էդիկ Կարախանյանի կողմից դիտորդ»:

Դիտարկված տեղամասերից 18-ում ընտրական գործընթացը դիտարկվել է միայն ՀՔԱ Վանաձորի գրասենյակի դիտորդների կողմից:

Քվեասենյակի կահավորումը, տարածքը և անհրաժեշտ տեղեկատվության առկայությունը

Դիտարկված տեղամասերից 52-ում քվեասենյակի կահավորումը եղել է ըստ սահմանված ձևի, իսկ 4 տեղամասում եղել են որոշակի խախտումներ, մասնավորապես՝

- Թիվ 30/03 տեղամասում քվեախցիկները չափազանց մոտ են եղել միմյանց և ՀՔԱ Վանաձորի գրասենյակի դիտորդի միջնորդությամբ հեռացվել են մինչև քվեարկության սկսելը:
- Թիվ 30/20 տեղամասում քվեախցիկի դիրքը չի թույլատրել ընտրողներին լինել դեմքով դեպի հանձնաժողովը, ինչպես դա նախատեսվում է օրենքով:
- Թիվ 30/27 տեղամասում, որը գտնվել է թիվ 9 դպրոցի առաջին հարկում, քվեախցիկները տեղադրված են եղել լուսամուտի դիմաց, որ նույնպես հակասում է ընտրական օրենսգրքի պահանջներին:
- Թիվ 30/31 տեղամասում դիտորդն արձանագրել է, որ քվեախցիկները գտնվել են միմյանցից 30 սմ հեռավորության վրա և քվեասենյակի լուսավորությունը բավարար չի եղել:
- Թիվ 30/53 տեղամասում չհրկիզվող պահարանի փոքր լինելու պատճառով բոլոր ծրարները դրված են եղել պահարանի մոտ՝ լուսամուտի գոգին:

ՏԻՄ ընտրությունների ժամանակ կենտրոնական ընտրական հանձնաժողովը տրամադրել է ստվարաթղթե քվեախցիկներ, որոնք ըստ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի դիտորդների, քվեաթերթիկում նշում կատարելիս ճկվել են և դժվարեցրել քվեարկությունը:

Դիտարկված տեղամասերից 11-ում (20%) քվեասենյակի տարածքը բավարար չի եղել քվեարկության բնականոն ընթացքը և քվեասենյակում գտնվելու իրավունք ունեցող մարդկանց գործունեությունն ապահովելու համար: Այս հանգամանքը հիմնականում պայմանավորված է եղել նրանով, որ ավագանու 52 թեկնածուներից շատերն են վստահված անձինք ունեցել տվյալ տեղամասերում, մի հանգամանք, որն անհրաժեշտ էր հաշվի առնել քվեասենյակների ընտրության ժամանակ, որպեսզի հնարավոր լիներ ընտրական գործընթացն իրականացնել առանց խոչընդոտների:

Ընտրատեղամասերից 4-ում քվեարկության համար անհրաժեշտ տեղեկատվությունն ամբողջությամբ առկա չի եղել, այսպես՝ թիվ 30/25 տեղամասում բացակայել է քվեաթերթիկի նմուշը, որը փակցվել է ՀՔԱ Վանաձորի գրասենյակի դիտորդի զգուշացումից հետո:

Ընտրացուցակների հետ կապված խնդիրներ

Ընտրացուցակների հետ կապված խնդիրներ արձանագրվել են դիտարկված տեղամասերից 8-ում, որոնք վերաբերել են և որոշ քաղաքացիների անունների բացակայությանը և հանրապետությունից բացակա անձանց անունների առկայությանը: Ըստ ՀՀ Ազգային վիճակագրության վարչության տվյալների 2011 թ. հունվարի 1-ի դրությամբ Վանաձոր համայնքում մշտապես բնակվել է 104 998 մարդ:[3] Նույն ծառայության տվյալներով այս քաղաքացիների մոտ 26 %-ը 18 տարեկանից փոքր են եղել, և քանի որ ոչ մի օբյեկտիվ հիմք չկա ենթադրելու, որ վերջին մեկ տարվա ընթացքում Վանաձոր համայնքի բնակչությունն ավելացել է, Վանաձոր համայնքի ընտրացուցակներում 96 248 ընտրողի առկայությունը առնվազն հավատ չի ներշնչում:

Բազմակի քվեարկություն

Թեև դիտորդական առաքելության սույն ձևաչափը հնարավորություն չի տվել դիտարկել տեղամասերը քվեարկության ողջ ընթացքում և ըստ այդմ կարող են լինել բացթողումներ, այնուամենայնիվ դիտարկված ժամանակահատվածում բազմակի քվեարկության դեպքեր չեն գրանցվել:

Բաց քվեարկություն և քվեարկության արդյունքի անօրինական վերահսկողություն

Քվեաթերթիկը քվեախցիկից դուրս լրացնելու դեպքեր գրանցվել են դիտարկված տեղամասերից երկուսում, իսկ դիտարկված տեղամասերից 11-ում դիտորդներն արձանագրել են քվեարկության արդյունքի մասին հանձնաժողովի անդամներին կամ վստահված անձանց հաղորդելու միտում: Մասնավորապես՝

- Թիվ 30/14 տեղամասում համայնքի ղեկավարի թեկնածու Սամվել Դարբինյանի վստահված անձը քվեարկություն կատարելուց հետո շնորհակալություն է հայտնել մի շարք մարդկանց:
- Թիվ 30/20 տեղամասում ընտրողը բարձրաձայն հայտնել է, թե ում է ընտրում ապա նոր քվեարկել
- Թիվ 30/25 տեղամասում ընտրողները քվեախցիկից դուրս են եկել առանց ընտրաթերթիկները ծրարների մեջ դնելու: Թերթիկները հանձնաժողովի նախագահին ցույց տալուց հետո, նախագահն ասել է, որ պետք է դնել ծրարի մեջ:
- Թիվ 30/27 տեղամասում դիտորդն արձանագրել է, որ բոլոր քվեարկողներն ուղղորդվում էին, թե դրսից բերողների կողմից և թե ներսից՝ հայացքների միջոցով
- Թիվ 30/31 տեղամասում քաղաքացին քվեարկելուց հետո դուրս է եկել և հանձնաժողովի նախագահին նայելով հայտնել, թե ում է ընտրել

[3] http://www.armstat.am/file/RegStat/marz/MARZ_06.pdf

- Թիվ 30/36, 30/37, 30/58 տեղամասերում քվեարկությունից հետո ընտրողները դեմքի միմիկաներով տեղեկացրել են իրենց ընտրության մասին
- Թիվ 30/40 տեղամասում ընտրողը պատասխանել է այն հարցի, թե ավագանու որ թեկնածուին է ընտրել
- Թիվ 30/53 և 30/54 տեղամասերում դիտորդն արձանագրել է, որ Ս. Դարբինյանի վստահված անձը միշտ հայացքով և նշմարներով ուղակցում էր ընտրողներին, որոնք էլ իրենց հերթին քվեարկելուց հետո նայում էին նրան, գլխով անում կամ ժպտում ու հեռանում:

<u>Մի քանի անձի միաժամանակյա մուտքը քվեարկության խցիկ և ինքնուրույն քվեարկելու կարողություն չունեցող անձանց քվեարկություն</u>

Քանի որ տարեց քաղաքացիները բավականին մեծ ակտիվությամբ են մասնակցում ընտրություններին, շատ են նաև ինքնուրույն քվեարկել չկարողացող անձինք: Դիտորդների դիտարկմամբ բոլոր դեպքերում մի քանի անձանց միաժամանակյա մուտքը քվեախցիկ եղել է հարազատների կողմից միմյանց օգնելու նպատակով, սակայն կանխվել է հանձնաժողովի կողմից: և օգնել թույլատրվել է արձանագրելուց հետո: Դիտարկման ընթացքում ինքնուրույն քվեարկելուու կարողություն չունեցող անձանց քվեարկություն չի արձանագրվել դիտարկված տեղամասերից 6-ում: Ինքնուրույն քվեարկել չկարողացող ընտրողներին օգնող քաղաքացիների տվյալները ոչ միշտ են գրանցվել դիտարկված տեղամասերից 5-ում: Հանձնաժողովի նախագահի անիրազեկության պատճառով, որոշ տեղամասերում քաղաքացու հետ տեղամաս եկած հարազատին արգելվել է օգնել քաղաքացուն:

- Թիվ 30/38 տեղամասում հանձնաժողովի նախագահը, թույլատրել է, որ քաղաքացուն օգնի մեկ այլ քաղաքացի՝ հստակ իմանալով, որ վերջինս թեկնածուի վստահված անձ է մեկ այլ տեղամասում:
- Թիվ 30/27 տեղամասում գրանցվել են բողոքներ, որ որոշ վստահված անձինք երբեմն օգնում են ինքնուրույն քվեարկելու կարողություն չունեցող անձանց և այս փաստը չի արձանագրվում:

<u>Քվեարկության սենյակում ներկա գտնվելու իրավունք չունեցող անձանց ներկայություն</u>

Դիտարկված տեղամասերից 9-ի քվեասենյակում ներկա են գտնվել քվեասենյակում ներկա գտնվելու իրավունք չունեցող անձինք: Լրացուցիչ դժվարություն է ստեղծել նաև ավագանու անդամության թեկնածուների վստահված անձանց բարձր թիվը, որոնք համապատասխան վկայական չեն կրել: Որոշ դեպքերում քվեասենյակում գտնվելու իրավունքն չունեցող անձինքն դուրս են հրավիրվել տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի

կողմից: Բավականին հաճախ քվեասենյակ են մտել նաև տեղամասերին կցված ոստիկանները, օրինակ՝

- Թիվ 30/13 տեղամասին կցված ոստիկանը մի քանի անգամ ներս է եկել և ընտրողների քանակի վերաբերյալ տեղեկացել հանձնաժողովի նախագահից կամ քարտուղարից:
- Թիվ 30/51 տեղամասի քվեարկության սենյակում ներկա է գտնվել մի քաղաքացի, որը մի քանի ժամ շարունակ նստել է սենյակում և ներս ու դուրս արել: Դիտորդի հարցին, թե ով է այդ անձը, հանձնաժողովը պատասխանել է, որ այդ թաղամասի բնակիչ է:

Տեղամասի ներսում քարոզչական նյութերի կամ միջոցառումների առկայություն

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի դիտորդն արձանագրել է, որ թիվ 30/08 տեղամասում առկա է ավագանու թեկնածու Հայկ Գևորգյանի նախընտրական օրացույցը: Թիվ 30/45, 30/11, 30/13 դիտորդներն արձանագրել են, որ քվեասենյակի պատին փակցված է Սերժ Սարգսյանի նկարը: Հաշվի առնելով Սերժ Սարգսյանի հրապարակային աջակցությունը քաղաքապետի թեկնածու Սամվել Դարբինյանին՝ այս նկարը կարող է ուղղորդող նշանակություն ունենալ:

Քվեարկության սենյակի կարգապահությունը

Դիտարկված տեղամասերից 7-ում դիտորդներն արձանագրել են դեպքեր, երբ ընտրողների թիվը գերազանցել է 15-ը, սակայն հանձնաժողովի նախագահները հիմնականում կարողացել են տիրապետել իրավիճակին կամ դիմել են տեղամասին կցված ոստիկանների օգնությանը:

- Թիվ 30/18 տեղամասում քվեասենյակի տարածքի փոքրության պատճառով թույլատրվել է, որ քվեասենյակում միաժամանակ գտնվեն առավելագույնը 10 ընտրող:
- Թիվ 30/19 տեղամասում հաճախակի նկատվել են կարգապահական խախտումներ, հանձնաժողովի նախագահը շատ դեպքերում չի կարողացել իրավիճակը կարգավորել:

Քվեարկության հետ կապված բողոքներ

Քվեարկության հետ կապված բողոքներ գրանցվել են մի շարք տեղամասերում: Մասնավորապես

- Թիվ 30/7, 30/11, 30/23, 30/38, 30/42, 30/46, 30/52, 30/56 արձանագրվել է, որ անձնագրում դրվող կնիքը չի պահպանվում և մոտ 1 ժամ անց ցնդում է, ԸԸՀ ցուցմունքով թանաքը փոխարինվել է սովորական թանաքով
- Թիվ 30/14 տեղամասում հանձնաժողովի անդամներ դանդաղ աշխատանքի պատճառով կուտակումներ են առաջացել, որը հարուցել է ընտրողները դժգոհությունը

- Թիվ 30/20 տեղամասում քաղաքացին չի ցանկացել, որ իր անձնագիրը կնիքեն՝ պատճառաբանելով, որ օգտագործվող սովորական թանաքը չի ցնդում և ինքը խնդիրներ է ունենում: Հանձնաժողովի նախագահի բացատրությունից հետո քաղաքացին համաձայնել է
- Թիվ 30/36 տեղամասում վստահված անձը բողոքել է հանձնաժողովի անդամներից մեկի գործողություններից և պահանջել է արձանագրել իր բողոքը, սակայն այն որևէ կերպ չի արձանագրվել
- Թիվ 30/39 տեղամասում նկարահանվել է քվեարկության պահը, փաստը արձանագրվել է գրանցամատյանում, սակայն չի ստորագրվել նախագահի կողմից, որը պատճառաբանել է, որ նման բան չի տեսել
- Թիվ 30/46 տեղամաս են եկել ծերատան բնակիչներ, որոնց չի թույլատրվել քվեարկել, քանի որ իրենց հետ ունեցել են միայն անձնագրի պատճեն: Ծերերը տեղեկացրել են, որ իրենց անձնագրերը վերցրել են ծերատանը:

<u>Խախտումների վերացում և գնահատականների գրանցում գրանցամատյանում, հանձնաժողովի վարքը</u>

Ըստ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի դիտորդների՝ ընտրական պրոցեսի ընթացքում տեղի ունեցած խախտումները և ընտրական գործընթացի մասնակիցների կողմից տրված գնահատականները գրանցվել են միայն 24 տեղամասերի գրանցամատյաններում, մասամբ են գրանցվել 6 տեղամասում, չեն գրանցվել 5 տեղամասում և խախտումներ կամ գնահատականներ չեն եղել 8 տեղամասում: Մյուս տեղամասերի վերաբերյալ տվյալն անհայտ է: Հանձնաժողովների նախագահները հիմնականում պատրաստակամ են եղել վերացնելու խախտումները, երբ դրանք ներկայացվել են, սակայն 8 տեղամասերում դիտորդները խտրական վերաբերմունք են արձանագրել դիտորդների կամ վստահված անձանց նկատմամբ:

- Թիվ 30/04 տեղամասում ՀՔԱ Վանաձորի գրասենյակի դիտորդը քվեախցիկում հայտնաբերել է 2 ծրար, որոնք հանձնվել են հանձնաժողովի նախագահին և անմիջապես մարվել: Նույն տեղամասում դիտորդը նկատել է մի խումբ երիտասարդների քննարկում քվեաթերթիկի շուրջ, որի մասին տեղեկացվել է հանձնաժողովի նախագահին և քննարկումն անմիջապես դադարեցվել է
- Թիվ 30/07 տեղամասում միաժամանակ ներկա են եղել միևնույն թեկնածուի 2 վստահված անձ: Նախագահին տեղեկացնելուց հետո խախտումը վերացվել է:
- Թիվ 30/07 տեղամասում դիտորդն արձանագրել է, որ ընտրողը քվեարկություն կատարելուց հետո ընտրատեղամասում զրուցում է վստահված անձի և դիտորդի հետ: Հանձնաժողովի քարտուղարին տեղեկացնելուց հետո քաղաքացին դուրս է հրավիրվել:

- Թիվ 30/19 տեղամասում արձանագրվել է միջադեպ հանձնաժողովի նախագահի և ՄԻՊ Վանաձորի գրասենյակի իրավաբանի միջև: Նախագահը խոչընդոտել և արգելել է ՄԻՊ աշխատակցի մուտքը ընտրատարածք՝ պատճառաբանելով, որ իրավունք չունի: Այս վեճին միջամտել է Ս.Դարբինյանի վստահված անձը՝ Տիգրան Հախինյանը: Վերջինիս անունով և ստորագրությամբ կազմվել է արձանագրություն, որ ՄԻՊ աշխատակիցները խանգարում են ընտրության գործընթացին:
- Թիվ 30/32 տեղամասում տեղի է ունեցել վիճաբանություն համայնքի ղեկավարի թեկնածու Տարոն Ապրեսյանի վստահված անձի և հանձնաժողովի միջև: Այս մասին ՀՔԱ Վանաձորի գրասենյակին ահազանգել են Տարոն Ապրեսյանի նախընտրական շտաբից, որոնք նաև պնդել են, որ նշվածտեղամասում ընտրախախտումներ ու կեղծիքներ են արձանագրել:
- Թիվ 30/40 տեղամասում վստահված անձինք և դիտորդները չեն փակցրել իրենց վկայականները, ՀՔԱ Վանաձորի գրասենյակի դիտորդը դիմել է հանձնաժողովին նախագահին, որից հետո կարգադրել է փակցնել վկայականները, սակայն շատերն այնուամենայնիվ չեն փակցրել, ըստ այդմ անհայտ է, թե արդյոք տեղամասում գտնվող բոլոր անձինք իրավունք են ունեցել այնտեղ գտնվելու որպես վստահված անձ կամ դիտորդ:
- Թիվ 30/40 տեղամասում հանձնաժողովը քննարկել է. որ քաղաքապետի քվեաթերթիկ է դուրս հանվել, այդ մասին տեղեկացվել է նաև ընտրատարածքային կամ կենտրոնական ընտրական հանձնաժողովին:
- Թիվ 30/47 տեղամասում Ս. Դարբինյանի վստահված անձը նստել է ցուցակ լրացնողի կողքին և իր անձնական ցուցակում լրացրել է այն անձանց անունները, ովքեր արդեն քվեարկել են: Դիտորդն այդ մասին տեղեկացրել է հանձնաժողովի նախագահին, վերջինս վստահված անձին արգելել է նստել ցուցակների մոտ: Նույն տեղամասի հանձնաժողովի նախագահը պարբերաբար զանգել է ՄԻՊ գրասենյակ և լրատվական միջոցներին և խնդրել կարգավորել իրավիճակը տեղամասի շրջակայքում, որտեղ մեքենաներով, երթուղայիններով ընտրողներ են բերել տեղամաս: Հանձնաժողովի նախագահը նաև դիմել է ոստիկաններին և վերջիններս կարգավորել են խնդիրը: Սակայն հանձնաժողովի քարտուղարը վիճել է նախագահի հետ՝ պատճառաբանելով, որ իրենց «համար է վատ, որ լրագրողները գան կամ խախտում գրանցվի»:
- Թիվ 30/53 տեղամասից զանգերով կամ մարդկանց միջոցով ասվել է, թե ինչ մարդկանց ուղարկեն քվեարկության:

Իրավիճակը տեղամասի շրջակայքում

Տեղամասերի շրրջակայքը դիտարկվել է և տաղամասի ներսում տեղակայված դիտորդների և արագ արձագանքման խմբերի կողմից: Տեղամասերի շրջակայքի վերաբերյալ լրացվել է 65 դիտարկման քարտ, որոնք վերաբերում են դիտարկված տեղամասերից 56-ին:

<u>Ընտրողներին որևէ քաղաքական կուսակցության կամ թեկնածուի օգտին կողմնորոշող միջոցառումներ</u>

- Թիվ 30/46 տեղամասի շրջակայքում դիտորդն արձանագրել է քարոզչական պաստառի առկայություն, սակայն չի հաջողվել պարրզել, թե որ թեկնածուին է այն պատկանում
- Թիվ 30/40 տեղամասի նախագահը, անդամները և վստահված անձինք նշել են, որ մի կին անընդհատ մարդկանց թևանցուկ բերում է տեղամաս ու ցուցակով նշում: Նրանք հայտնել են, որ այդ կինը Տ.Մեծի 13 շենքում բնակվող, ոմն Գրետան է: Հանձնաժողովի նախագահը ոստիկաններին կարգադրել է կնոջն այլևս չթույլատրել 50 մ-ից մոտ գալ տեղամասին:
- Թիվ 30/46 տեղամասում համայնքի ղեկավարի թեկնածու Ս. Դարբինյանի վստահված անձը առանց տեղամասից դուրս գալն արձանագրելու պարբերաբար տևական ժամանակով լքել է տեղամասը և դիմավորել է ընտրողներին: Դիտորդն այդ մասին տեղեկացրել է հանձնաժողովի նախագահին, վերջինս ասել է, որ ինքը չի կարող հսկել թե ինչ է կատարվում դրսում: Նույն տեղամասում առավոտյան ժամը 11.00 –ին ընտրողների աննախադեպ հոսք է նկատվել, որն ակնհայտորեն ընտրողներին տեղամաս բվերելու արդյունք է եղել: Նույն ժամանակահատվածում տեղամասի միջանցքում ՀՔԱ Վանաձորի գրասենյակի դիտորդն արձանագրել է, որ անծանոթ մի կին քվեարկության սենյակ մտնող - դուրս եկող անձանց ինքնությունն է հարցնում («Դու ո՞վ էիր») և գրանցում իր մոտ: Դիտորդն անմիջապես այդ մասին տեղեկացրել է հանձնաժողովի նախագահին: Վերջինիս դուրս գալուց հետո ցուցակ կազմող կինը ցուցակը թաքցրել է: Երբ դիտորդը պնդել է, որ կինը ցուցակագրում է քաղաքացիներին, կինը պատասխանել է. «Լավ եմ անում, ես իմ թաղի մարդկանց եմ ցուցակագրում»: Հանձնաժողովի նախագահը դուրս է հրավիրել կնոջը և պահանջել, որ նման բան չկրկնվի:
- Թիվ 30/25, 30/34, 30/37, 30/39 և 30/46 տեղամասերի շրջակայքում դիտորդները նկատել են քաղաքացիների խմբերի և մեքենաներով տարածքը հսկող քաղաքացիների որոնք զրուցել են տեղամաս եկող ընտրողների հետ, ուղղորդել են, հարցրել, թե ում են ընտրելու կամ հարցրել, թե արդյոք հիշում են, թե որ համարին էին ընտրելու: Դիտորդին հաջողվել

է պարզել, որ թիվ 30/25 տեղամասում քաղաքացիներին ուղղորդող անձը լողավազանի տնօրենն է:

Ընտրակաշառքի բաժանում

Ընտրակաշառքի բաժանման փաստ արձանագրվել է թիվ 30/25 և 30/42 տեղամասերի շրջակայքում: Դիտորդներն արձանագրել են, որ ընտրողներն անձնագրերով մտնում են թիվ 30/25 տեղամասի դիմաց գտնվող ինտերնետային ակումբում տեղակայված շտաբ, որից հետո մտնում են քվեարկության և նորից վերադառնում շտաբ: Փաստը նկարահանվել է նաև Ազատություն լրատվամիջոցի կողմից:

Քաղաքացիների տեղափոխում՝ խմբերով, երթուղային տաքսիներով կամ մեքենաներով

Ընտրատեղամասի շրջակայքում խախտումների գերակշռող մասը վերաբերում է քաղաքացիների տեղափոխմանը: Ըստ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի դիտորդների՝ քաղաքացիների տեղափոխում արձանագրվել է դիտարկված տեղամասերից 22-ում: 6 տեղամասում հաջողվել է ճշտել, որ տեղափոխությունն իրականացվում է համայնքի ղեկավարի թեկնածու Ս. Դարբինյանի կողմնակիցների կողմից:

Տեղափոխող մեքենաների մի մասի տվյալները հաջողվել է ձեռք բերել: (լուսանկարները տե՛ս Հավելված 1-ում)

ԸՏ համարը	մեքենայի տվյալները
30/01	0506 L, 0564 L երթուղային տաքսի
30/02	0466 L երթուղային տաքսի
30/06	0520 L երթուղային տաքսի
30/08	0635L երթուղային տաքսի
30/15	0533 L երթուղային տաքսի
30/18	0422 L երթուղային տաքսի
30/23	0481 L երթուղային տաքսի
30/24	0603 L, 0481 L երթուղային տաքսի
30/25	0537 L երթուղային տաքսի
30/44	77 101 նիվա մակնիշի մեքենա
30/46	0456 L, երթուղային տաքսի 58LU195, 65 SU627
30/47	0631 L, 0499 L երթուղային տաքսի
30/50	0954 L երթուղային տաքսի
30/51	65os281 երթուղային տաքսի
30/53, 54	1861 L, 0469 L երթուղային տաքսի, 77OL 774, 017 oo 17 սև ջիպ

Տեղամասային կենտրոնին մինչև 50 մետր շառաղվող հարող տարածքում մարդկանց և մեքենաների կուտակումներ

Քվեարկության օրը՝ տարբեր ժամերի տեղամասային կենտրոնին հարող տարածքում մարդկանց և մեքենաների կուտակումներ արձանագրվել է դիտարկված տեղամասերից 17-ում: Մասնավորապես թիվ 30/53 և 30/54 տեղամասերում, որոնք գտնվում են միևնույն շինության մեջ, դիտորդն արձանագրել է, որ դրսում են գտնվել ավագանու անդամության թեկնածուներ Գևորգ Շահինյանի, Վահագն Դավիթավյանի կողմնակիցներից, որոնք զանգերով պարբերաբար «հիշեցրել են» քաղաքացիներին, թե որ համարի օգտին պետք է քվեարկեն: Դիտորդը նկատել է նաև այլ թեկնածուների վստահված անձանց, որոնք մշտապես դրսում են եղել:

Ձայների հաշվարկ

Ձայների հաշվարկը դիտարկվել է 12 տեղամասում, որտեղ քվեարկության ընթացքում ամենաշատ խախտումները, միջադեպերը և ընդհանուր ակտիվություն է գրանցվել:

Դիտարկված բոլոր տեղամասերը փակվել են երեկոյան 20:00-ին թույլատրելով քվեարկել տեղամասի ներսում գտնվող ընտրողներին: Դիտարկված տեղամասերից 7-ում հաշվարկին մասնակցել են դիտորդներ նաև այլ կազմակերպություններից: Հաշվարկի գործընթացին առավելագույնը մասնակցել է 30 վստահված անձ (թիվ 30/49 տեղամաս): Ինքնուրույն քվեարկելու կարողություն չունեցող անձանց քվեարկության ամենաբարձր թիվն ըստ գրանցաատյանի գրանցվել է թիվ 30/51 տեղամասում՝ 29 ընտրող:

Բոլոր 12 տեղամասում ձայների ամփոփումը սկսվել է անմիջապես տեղամասի փակումից հետո՝ օրենքով սահմանված կարգով:

<u>Քվեարկության արդյունքների ամփոփման ընթացքում տեղի ունեցած միջադեպերը</u>

- Թիվ 30/09 տեղամասի հանձնաժողովի նախագահը ձայների հաշվարկից հետո հրաժարվել է տրամադրել արձանագրության քաղվածքը՝ պատճառաբանելով, որ ամբողջ աշխատանքը դեռևս ավատված չէ
- Թիվ 30/40 տեղամասում ձայների հաշվարկն իրականացվել է չափազանց դանդաղ, ինչը դժգոհության պատճառ է դարձել: Հաշվարկի ընթացքում հայտնել են, որ տեղամասում տեղի է ունեցել քվեաթերթիկների կամ ծրարի դուրս բերում՝ 2 կամ 3 ծրար: Նաև քննարկվել է, որ մարդկանց ցուցակներով ներկա բացակա են արել դրսում, երթուղային տաքսիներով և մեքենաներով բերել են տեղամաս: Ըստ քննարկումների՝ հիմնականում եղել են համայնքի ղեկավարի թեկնածու Ս. Դարբինյանի ներկայացուցներն, ինչպես նաև որոշ ավագանու թեկնածուների ներկայացուցիչներ:
- Թիվ 30/44 տեղամասում ընտրացուցակում՝ մեկ ընտրողի տվյալների դիմաց, բացակայել է հանձնաժողովի անդամի կնիքը: Հանձնաժողովի անդամների համաձայնությամբ հանձնաժողովի անդամներից մեկը ստորագրրել է դատարկ տողում: Նույն տեղամասում տեղամասին կցված ոստիկանները ձայների հաշվարկի ժամանակ գտնվել են քվեասենյակում:
- Թիվ 30/46 տեղամասում ձայների հաշվարկի ժամանակ գտնվել են մարդիկ, որոնց ինքնությունը հայտնի չի եղել: Նրանք ներկայացել են որպես համայնքի ղեկավարի թեկնածու Ս. Դարբինյանի և ավագանու անդամության թեկնածու Կ. Պառավյանի վստահված անձինք, որոնք մինչ այդ չէին գրանցվել: Փաստի առթիվ վիճաբանություն է

տեղի ունեցել համայնքի ղեկավարի թեկնածու Էդիկ Կարախանյանի վստահված անձի հետ, որը հարթվել է հանձնաժողովի նախագահի միջամտությամբ:

- Թիվ 30/51 տեղամասում հանձնաժողովը հրաժարվել է լսել վստահված անձանց կարծիքները և առաջարկությունները, քվեարկության սենյակը չի ապահովել ընտրության և հաշվարկի բնականոն գործընթացը: Տեղամասում ծառայություն իրականացնող ոստիկանները գտնվել են նույն սենյակում, սակայն վարագույրի հետևում, իսկ քվեարկության արդյունքների ամփոփման ընթացքում պարբերաբար հայտնվել են ամփոփման համար առանձնացված մասում:

Քվեարկության օրը հայտնաբերված խախտումների վերաբերյալ կազմակերպության կողմից իրականացված գործողություններ

2012 թ. սեպտեմբերի 9-ին՝ Վանաձոր քաղաքի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ կազմակերպության կողմից իրականացված դիտորդական առաքելության ընթացքում արձանագրված մի շարք խախտումների վերաբերյալ կազմակերպության կողմից դիմումներ են ուղարկվել համապատասխան մարմիններին՝ խախտումները վերացնելու ուղղությամբ միջոցառումներ ձեռնարկելու պահանջով:

1. Քվեարկության օրը առավոտյան կազմակերպության դիտորդները արձանագրել են, որ թիվ 30/07, 30/08, 30/53, 30/54 ընտրատեղամասեր ընտրողներին են բերում Վանաձոր քաղաքի ներքաղաքային երթուղային տաքսիներով: (տե՛ս Հավելված 2)

Կազմակերպության կողմից գրություն է ուղարկվել ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով և ՀՀ ոստիկանություն:

2012 թ. Սեպտեմբերի 20-ին ոստիկանության Վանաձորի բաժնից ստացվել է ընտրողների կամքի ազատ արտահայտմանը խոչնդոտելու վերաբերյալ նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում, այն հիմքով որ մեր կողմից նշված պետհամարանիշով երթուղային տաքսիների վարորդները այդ օրը աշխատանքի չեն եղել և քվեարկության են բերել իրենց ընտանիքի անդամներին, մտերիմներին, ընկերներին: Նրանք իրենք են խնդրել վարորդներին իրենց հասցնել ընտրատեղամաս քվեարկությանը մասնակցելու համար: Չնայած այն հանգամանքին, որ ոստիկանության աշխատակիցների կողմից ուսումնասիրության առարկա է դարձել խախտման վերաբերյալ կազմակերպության հաղորդումը, սակայն ըստ էության քննություն չի կատարվել ներկայացված հանգամանքները բացահայտելու ուղղությամբ: Ոստիկանությունը քայլեր չի ձեռնարկել հաղորդումից անմիջապես հետո խախտումը վերացնելու, ինչպես նաև ստուգելու վարորդների կողմից տրված բացատրությունները՝ ուսումնասիրելու այդ հաստատության աշխատանքային մատյանները, որոնցում գրանցվում է տվյալ վարորդների աշխատանքային գրաֆիկը:

Գրության վերաբերյալ ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից պատասխան չի տրամադրվել:

2. Դիտորդների կողմից ահազանգ է ստացվել, որ 30/52, 30/38, 30/7, 30/11, 30/46 ընտրատեղամասերում անձնագրում դրվող կնիքը ցնդում է, այն դնելուց մոտ 1 ժամվա ընթացքում: Փաստի կապակցությամբ գրություն է ուղարկել ՀՀ Կենտրոնական ընտրական

հանձնաժողով՝ խնդրելով ձեռնարկել համապատասխան միջոցներ խախտումը վերացնելու ուղղությամբ: (տե՛ս Հավելված 3)

Կազմակերպության կողմից ուղարկված գրությանը պատասխան չի ստացվել, սակայն ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ցուցում է տրվել անձնագրում դրվող կնիքի թանաքը փոխարինել սովորական թանաքով:

3. Քվեարկության օրը կազմակերպությունը խախտումների վերաբերյալ ահազանգ է ստացել նաև համայնքի ղեկավարի թեկնածու Տ. Ապրեսյանի նախընտրական շտաբից այն մասին, որ Լոռու մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Արմեն Ջանազյանը քվեարկելուց հետո չի հեռացել ընտրատեղամասի տարածքից: Այսինքն ընտրատեղամասում գտնվել է տեղամասում գտնվելու իրավունք չունեցող անձ: Խախտումը վերացնելու ուղղությամբ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից քայլեր չեն ձեռնարկվել չնայած այն հանգամանքին, որ ՀՀ ընտրական օրենսգրքի 65-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ պարբերության համաձայն՝ քվեարկելուց հետո ընտրողն անհապաղ պետք է դուրս գա տեղամասային կենտրոնից; (տե՛ս Հավելված 4)

4. Կազմակերպության դիտորդները տեղամասերի բակերում մինչև 50 մետր շառավղով կուտակումներ են արձանագրել: Խախտումը վերացնելու պահանջով գրություն է ուղարկվել ՀՀ թիվ 30 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով: (տե՛ս Հավելված 5)

Գրության վերաբերյալ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից ստացվել է պատասխան, որով նախագահը հայտնել է, որ ընտրատեղամասի դրսում ավտոմեքենաների կուտակումների վերահսկողությունը ընտրատարածքային և տեղամասային հանձնաժողովի լիազորությունների մեջ չի մտնում:

5. Կազմակերպության դիտորդների կողմից արձանագրված խախտումների վերաբերյալ կազմակերպության էլեկտրոնային էջում հրապարակվել են մամլո հաղորդագրություն:

Հրապարակման վերաբերյալ ՀՀ Ոստիկանության Լոռու մարզային վարչության կողմից 2012 թ. սեպտեմբերի 13-ին գրություն է ստացվել այն մասին, որ ոստիկանությունում նյութեր են նախապատրաստվում կազմակերպության կողմից news.am ինտերնետային լրատվական ծառայությանը տրված հայտարարության հիման վրա: (տե՛ս Հավելված 6)

Ոստիկանությունից խնդրել են տրամադրել հիմնավոր փաստեր, թե որ տեղամասերում են արձանագրվել քվաթերիկը սխալ լրացնելու դեպքեր:

Մեկ այլ գրությամբ հարցաքննության են հրավիրել կազմակերպության այն, դիտորդներին, որոնք արձանագրել են երթուղային մեքենաներով ընտրողներին տեղափոխելու դեպքեր: Կազմակերպության կողմից գրություն է ուղարկվել ոստիկանություն, որով հայտնել ենք կազմակերպության դիրքորոշումը, այն է՝ հարցաքննության դիտորդները կներկայանան քրեական գործ հարուցելուց հետո: Միաժամանակ ոստիկանությանը տրամադրվել է կազմակերպության կողմից արձանագրված խախտումների վերաբերյալ լուսանկարներ և տեսագրություններ, որոնցում պարզ երևում են այն երթուղային տաքսիները, որոնցով ընտրողներին ընտրատեղամաս են բերել:

2012 թ. սեպտեմբերի 20-ին ոստիկանության Վանաձորի բաժնից ստացվել է ստվարաթղթե քվեախցիկների և անձնագրում դրվող կնիքը ցնդելու վերաբերյալ մամուլով հրապարակված խախտումների վերաբերյալ նյութի հիման վրա, քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում, հանցագործության դեպքի բացակայության հիմքով:

Կազմակերպության կողմից արձանագրված խախտումների վերաբերյալ՝ մասնավորապես քվեարկության ծրարները չհրկիզվող պահարանում չպահելու, քվեարկությունից հետո մարզպետարանի աշխատակցի տեղամասից չհեռանալու, բաց քվեարկության, ընտրողներին ուղղորդելու վերաբերյալ նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է հանցագործության դեպքի բացակայության հիմքով: Ոստիկանության կողմից չեն ձեռնարկվել համապատասխան միջոցառումներ ըստ էության քննություն կատարելու ուղղությամբ: Որոշման մեջ նշվում է, որ խախտման փաստը ստուգելու համար ոստիկանություն է հրավիրվել տեղամասային հանձնաժողովի նախագահը, սակայն վերջինս հրաժարվել է ներկայանալ ոստիկանություն և որևէ բացատրություններ տալուց և հեռախոսով հայտնել է, որ տեղամասում խախտումներ (բաց քվեարկության դեպքեր և այլն) չեն կատարվել: Այսինքն ոստիկանության աշխատակիցների կողմից չի կատարվել հնարավոր բոլոր քայլերը հանձնաժողովի նախագահին հարցաքննելու համար:

Հավելված 1. Ընտրողներին տեղափոխող որոշ մեքենաների լուսանկարներ

Նկար 1. Թիվ 30/42 տեղամաս

Նկար 2. Թիվ 30/01 տեղամաս



Նկար 3. Թիվ 30/44 տեղամաս

Նկար 4. Թիվ 30/44 տեղամաս

Նկար 5. Թիվ 30/25 տեղամաս

Նկար 6. Թիվ 30/46 տեղամաս

Նկար 7. Թիվ 30/46 տեղամաս

Նկար 8. Թիվ 30/46 տեղամաս

Նկար 9. Թիվ 30/07-08 տեղամաս

Նկար 10. Թիվ 30/07-08 տեղամաս

Հավելված 2. Գրություն ՀՀ Ոստիկանությանը և ՀՀ Կենտրոնական ընտրական հանձաժողովին՝ միկրոավտոբուսներով ընտրողներին տեղափոխելու վերաբերյալ

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am

Ե/2012- 09.09/301
09. 09.2012 թ.

ՀՀ Կենտրոնական ընտրական
հանձնաժողովի նախագահ
Տ. Մուկուչյանին

Պատճենը՝ ՀՀ ոստիկանության պետ
Վլադիմիր Գասպարյանին

Հայտնում եմ Ձեզ այն մասին որ, ՀՔԱ Վանաձորի գրասենյակի դիտորդները արձանագրում են, Վանաձոր քաղաքի թիվ 30/07, 30/08 ընտրատեղամասեր 3 անգամ ընտրողներին քվեարկության է բերում 0635L պետհամարանիշի երթուղային տաքսին (գազել): Իսկ 30/53, 30/54 տեղամասերում ընտրողներին քվեարկության են բերում 1861Լ կապույտ գույնի և 0469 պետհամարանիշի կանաչ գույնի երթուղային տաքսիները (գազել):

Ուստի ելնելով վերոգրյալից խնդրում եմ ձեռնարկել համապատասխան միջոցներ խախտումները վերացնելու ուղղությամբ:

Կազմակերպության իրավական
բաժնի համակարգող՝ Օֆելյա Զալյան

Կատարող՝ Ա. Զալյան
azalyan@hcav.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՎԱՆԱՁՈՐԻ ԲԱԺԻՆ

2001. ՀՀ ք. Վանաձոր, Մխիթար Գոշի փող. թիվ 3
(0322) 2 03 03
(010) 28 10 66
Ֆաքս (0322) 2 02 02,
(010) 28 10 66

Թիվ՝ 71/5 - 8399
<<13>> սեպտեմբերի 2012թ.

Հելսինկյան քաղաքացիական
Ասամբլեայի Վանաձորի
Գրասենյակի նախագահ
ԱՐԹՈՒՐ ՍԱՔՈՒՆՑԻՆ

Հայտնում եմ, որ ոստիկանության Վանաձորի բաժնում նյութեր են նախապատրաստվում Ձեր գրասենյակի դիտորդների կողմից Վանաձոր քաղաքի թիվ 30/07, 30/08 ընտրատեղամասերում արձանագրած 0635Լ պետհամարանիշի երթուղային տաքսու կողմից երեք անգամ ընտրողներին քվեարկության տանելու, թիվ 30/53, 30/54 տեղամասեր 1861Լ և 0465Լ պետհամարանիշի երթուղային տաքսիներով ընտրողներին քվեարկության տանելու վերաբերյալ:

Անհրաժեշտությունից ելնելով առաջարկում եմ ընտրատեղամասերում հիշյալ փաստերն արձանագրած դիտորդներին 14.09.2012թ. ժամը 12:00-ին ներկայանալ ոստիկանության Վանաձորի բաժնի հետաքննության բաժանմունքի պետ Ա.Սարգսյանի մոտ՝ բացատրություն տալու:

Միաժամանակ խնդրում եմ ներկայացնել վերոհիշյալ դեպքերը հաստատող փաստարկները:

Պետ, ոստիկանության գնդապետ՝ Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Կատ.՝ Ս.Սարգսյան
Հեռ.՝ /0322/6-75-00

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՎԱՆԱՁՈՐԻ ԲԱԺԻՆ

2001. ՀՀ ք. Վանաձոր, Մխիթար Գոշի փող. թիվ 3
(0322) 2 03 03
(0322) 2 02 02
(010) 28 10 66
Ֆաքս (0322) 2 02 02

Թիվ՝ 71/5 - 8563

<< 20 >> սեպտեմբերի 2012թ.

Հելսինկյան քաղաքացիական
Ասամբլեայի Վանաձորի
Գրասենյակի նախագահ
ԱՐԹՈՒՐ ՍԱՔՈՒՆՑԻՆ

Հայտնվում է, որ Ձեր գրասենյակից ստացված հաղորդագրության, հիման վրա որ 0635Լ, 1861Լ, 0469Լ հ/հ-ի <Գազել>> մակնիշի մեքենաները ընտրողներին տեղափոխում են ընտրատեղամասեր, նախապատրաստված նյութերով մերժվել է քրեական գործի հարուցումը:

ՈՒղարկում եմ մերժման որոշման մեկ օրինակը, որին համաձայն չլինելու դեպքում այն ստացման պահից յոթօրյա ժամկետում կարող եք բողոքարկել վերադաս դատախազին կամ դատարան:

Առդիր որոշումը << 2 >> թերթ:

Պետ, ոստիկանության գնդապետ՝ *Ա.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ*

Կատ.՝ Ա.Սարգսյան
Հեռ.՝ /0322/6-75-00
/077/11-19-76

<<Հաստատում եմ>>
Ոստիկանության Վանաձորի բաժնի
պետ, ոստիկանության գնդապետ՝
Ա.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
<<14>> սեպտեմբերի 2012 թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Քրեական գործի հարուցումը մերժելու մասին

<< 18 >> սեպտեմբերի 2012 թ. ք. Վանաձոր

Ոստիկանության Վանաձորի բաժնի Հետաքննության բաժանմունքի պետ, ոստիկանության մայոր Ա.Սարգսյանս ուսումնասիրելով ՀՔԱ Վանաձորի գրասենյակից ՀՀ ԿԸՀ նախագահին և ՀՀ ոստիկանության պետին ուղարկված գրության վերաբերյալ նախապատրաստված նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2012 թվականի սեպտեմբերի 9-ին ՀՔԱ Վանաձորի գրասենյակից գրություն է ուղարկվել ՀՀ ԿԸՀ նախագահին / պատճեն ՀՀ ոստիկանության պետին / այն մասին, որ նույն օրը Վանաձոր համայնքում տեղի ունեցած ՏԻՄ ընտրությունների ընթացքում 0635Լ հաշվառման համարանիշի << Գազել >> մակնիշի ավտոմեքենան երեք անգամ ընտրողներին քվեարկության է տեղափոխել թիվ 30/07 և 30/08 ընտրատեղամասեր, իսկ 30/53 և 30/54 տեղամասերում ընտրողներին քվեարկության են տեղափոխել 1861Լ կապույտ գույնի և 0469Լ հաշվառման համարանիշի << Գազել >> մակնիշի ավտոմեքենաներով:

Նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվել է, որ 0469Լ պետհամարանիշի <<Գազել>> մակնիշի ավտոմեքենան պատկանում է << Բազե 11>> ՍՊ ընկերությանը, իսկ ավտոմեքենայի վարորդ է հանդիսանում Վանաձոր քաղաքի բնակիչ՝ Միքայել Անտոնյանը: 0635Լ պետհամարանիշի << Գազել >> մակնիշի ավտոմեքենան պատկանում է << Պլուտոն >> ՍՊ ընկերությանը, որի վարորդ է հանդիսանում Վանաձոր քաղաքի բնակիչ՝ Կորյուն Երեմյանը: 1861Լ պետհամարանիշի << Գազել >> մակնիշի ավտոմեքենան պատկանում է << Ռ և Հ Տրանս>> ՍՊ ընկերությանը, որի վարորդ է հանդիսանում Լոռու մարզի Բազում գյուղի բնակիչ Սասուն Պապիկյանը:

Պարզվել է նաև, որ նշված անձինք 2012 թվականի սեպտեմբերի 9-ին, չգտնվելով աշխատանքի մեջ, Վանաձոր համայնքի ՏԻՄ ընտրություններին մասնակցելու համար, իրենց ընտանիքի անդամներին, մտերիմներին և ընկերներին քվեարկության տանելու նպատակով, նրանց խնդրանքով, իրենց կողմից և կամքով վարվող հիշյալ ավտոմեքենաներով վերջիններիս տարել են վերոգրյալ ընտրատեղամասեր: Միքայել Անտոնյանի, Կորյուն Երեմյանի և Սասուն Պապիկյանի, ինչպես նաև որևէ անձի կողմից ընտրությունների օրը քարոզչություն կատարելու, որևէ անձի կողմից ինչ-որ թեկնածուի օգտին քվեարկելուն հորդորելու կամ հարկադրելու վերաբերյալ որևէ ապացույց նյութերի նախապատրաստման ընթացքում ձեռք չի բերվել:

Վերոգրյալը հիմնավորվել են Միքայել Անտոնյանի, Կորյուն Երեմյանի, Սասուն Պապիկյանի, Սոնյա Մարկոսյանի, Ռուբեն Անտոնյանի, Ռոզա Հարությունյանի, Արսեն Գասոյանի, Շողիկ Աղասյանի, Հենրիկ Բագարյանի, Աշոտ Մակարյանի, Արարատ Գրիգորյանի, Անահիտ Պետրոսյանի, Արարատ Ծատուրյանի, Իշխան Վանյանի, Արտուշ Կոբալյանի, Իլյիչ

-2-

Արզումանյանի, Ալեքսանդր Գրիգորյանի, Վաչիկ Փալանջյանի, Հասմիկ Հովսեփյանի, Քնարիկ Խուրշուդյանի, Սուսաննա Դարբինյանի, Լուսիկ Դանիելյանի բացատրություններով և նյութերում գտնվող այլ փաստաթղթերով:

Այսպիսով՝ նյութերի նախապատրաստման ընթացքում ընտրողների կամքի ազատ իրականացմանը, ընտրությանը մասնակցող անձանց լիազորությունների իրականացմանը խոչնդոտելու դեպքեր, ինչպես նաև ընտրախախտումների այլ դեպքեր չեն հայտնաբերվել, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 35 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 185 հոդվածի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1.Միքայել Անտոնյանի, Կորյուն Երեմյանի և Սասուն Պապիկյանի կողմից ընտրողների կամքի ազատ իրականացմանը խոչընդոտելու վերաբերյալ նախապատրաստված նյութերով մերժել քրեական գործի հարուցումը՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով:

2.Որոշման մեկ օրինակը նյութերի հետ միասին ուղարկել Լոռու մարզի դատախազին՝ մերժման օրինականությունը ստուգելու համար:

3.Որոշման մեկ օրինակն ուղարկել ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ղեկավար Արթուր Սաքունցին՝ միաժամանակ նրան պարզաբանելով որոշման բողոքարկման կարգը:

ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՊԵՏ՝ Ա. Ս Ա Ր Գ Ս Յ Ա Ն

Հավելված 3. Գրություն ՀՀ Կենտրոնական ընտրական հանձաժողովին՝ անձնագրերը կնիքելու համար նախատեսված թանաքի ցնդելու վերաբերյալ

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am

Ե/2012- 09.09/302
09. 09.2012 թ.

ՀՀ Կենտրոնական ընտրական
հանձնաժողովի նախագահ
Տ. Մուկուչյանին

Հարգելի պարոն Մուկուչյան

Հայտնում եմ Ձեզ այն մասին որ, ՀՔԱ Վանաձորի գրասենյակի դիտորդները արձանագրում են, որ Վանաձոր քաղաքի թիվ 30/52, 30/38, 30/7, 30/11, 30/46 ընտրատեղամասերում անձնագրում դրվող կնիքը ցնդում է մոտ 1 ժամվա ընթացքում:

Ուստի ելնելով վերոգրյալից խնդրում եմ ձեռնարկել համապատասխան միջոցներ խախտումը վերացնելու ուղղությամբ:

Կազմակերպության իրավական
բաժնի համակարգող՝ Օֆելյա Զալյան

Կատարող՝ Ա. Զալյան
azalyan@hcav.am

Հավելված 4. Գրություն ՀՀ ընտրատարածքային ընտրական հանձաժողովին՝ Տ. Ապրեսյանի շտաբից ստացված ահազանգի վերաբերյալ

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Mets st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am

Ե/2012- 09.09/303
09.09.2012 թ.

ՀՀ Կենտրոնական ընտրական
հանձնաժողովի նախագահ
Տ. Մուկուչյանին

Հարգելի պարոն Մուկուչյան

Հայտնում եմ այն մասին, որ ՀՀ Վանաձոր քաղաքի համայնքի ղեկավարի թեկնածու Տարոն Ապրեսյանի նախընտրական շտաբից տեղեկացրել են այն մասին, որ քաղաքացիներից ստացված զանգերից հայտնի է դարձել, որ ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Արմեն Զանազյանը չի հեռացել այն ընտրատեղամասի տարածքից, որտեղ ինքն ընտրություն է կատարել և մինչև այժմ գտնվում է այնտեղ:

Նշված փաստն արձանագրվել է նաև կազմակերպության դիտորդների կողմից:

Հաշվի առնելով նշվածը՝ խնդրում եմ ձեռնարկել համապատասխան միջոցներ նշված խախտումը վերացնելու ուղղությամբ:

Կազմակերպության իրավական
բաժնի համակարգող՝ Օֆելյա Զալյան

Կատարող՝ Ա. Զալյան
azalyan@hcav.am

Հավելված 5. Գրություն ՀՀ ընտրատարածքային հանձնաժողովին՝ կուտակումների վերաբերյալ

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am

Ե/2012- 09.09/304
09. 09.2012 թ.

Թիվ 30 ընտրատարածքային ընտրական
հանձնաժողովի նախագահ
Տ. Պապանյանին

Հարգելի պարոն Պապանյան

Հայտնում եմ Ձեզ այն մասին որ, ՀՔԱ Վանաձորի գրասենյակի դիտորդները արձանագրում են, որ Վանաձոր քաղաքի թիվ 30/25 ընտրատեղամասի բակում ավտոմեքենաների կուտակումներ են:

Խնդրում եմ ձեռնարկել համապատասխան միջոցառումներ խախտումը վերացնելու ուղղությամբ:

Կազմակերպության իրավական
բաժնի համակարգող՝ Օֆելյա Զալյան

Կատարող՝ Ա. Զալյան
azalyan@hcav.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
30 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
30 ОКРУЖНАЯ
ИЗБИРАТЕЛЬНАЯ КОМИССИЯ

REPUBLIC OF ARMENIA
30 DISTRICTION
ELECTORAL COMMISSION

ք. Վանաձոր, Հայքի հրապարակ
Մարզպետարանի շենք, 112 սենյակ
(+374 322) 4-13-41

Vanadzor
г. Ванадзор

Ե-53

« 9 » սեպտեմբերի 2012 թ.

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ
ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ Օ.ԶԱԼՅԱՆԻՆ

Ի պատասխան թիվ 30 ԸԸՀ ուղղված Ձեր հարցմանը, հայտնում ենք, որ համաձայն ՀՀ ընտրական օրենսգրքի 21 հոդվածի 4-րդ մասի, ավտոմեքենաների կուտակումների վերահսկողությունն ընտրատարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովների իրավասության մեջ չեն մտնում:

Առաջարկում ենք ուսումնասիրել վերոհիշյալ հոդվածը և դիմել ըստ իրավասության:

ԹԻՎ 30 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Տ.ՊԱՊԱՆՅԱՆ

Հավելված 6. News.am տեղեկատվական կայքից ստացված ինֆորմացիայի վերաբերյալ քննություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՎԱՆԱՁՈՐԻ ԲԱԺԻՆ

2001. << ք. Վանաձոր, Մխիթար Գոշի փող. թիվ 3
(0322) 2 03 03
(010) 28 10 66
Ֆաքս (0322) 2 02 02,
(010) 28 10 66

Թիվ՝ 71/5 - 8400
<<13>> սեպտեմբերի 2012թ.

Հելսինկյան քաղաքացիական
Ասամբլեայի Վանաձորի
Գրասենյակի նախագահ
ԱՐԹՈՒՐ ՍԱՔՈՒՆՑԻՆ

Հայտնում եմ, որ ոստիկանության Վանաձորի բաժնում նյութեր են նախապատրաստվում Ձեր գրասենյակի կողմից <<News.am>> ինտերնետային լրատվական ծառայությանը տված հաղորդագրության հիման վրա, որ քվեախցիկները ստվարաթղթից են, այն անհարմար է և սխալ նշումների պատճառ կարող է հանդիսանալ, միաժամանակ ընտրատեղամասերում արձանագրվել է, որ քաղաքացիների անձնագրերում դրվող կնիքները մեկ ժամից ավել չեն պահպանվում:

Անհրաժեշտությունից ելնելով խնդրում եմ հայտնել, թե որևէ տեղամասում արձանագրվել է քվեաթերթիկում սխալ նշում կատարելու փաստեր, եթե այո, ապա ներկայացնել դրանք հիմնավորող փաստարկներ:

Պետ, ոստիկանության գնդապետ՝ Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Կատ.՝ Ս.Սարգսյան
Հեռ.՝ /0322/6-75-00

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՎԱՆԱՁՈՐԻ ԲԱԺԻՆ

✉ 2001. << ք. Վանաձոր, Մխիթար Գոշի փող. թիվ 3
☎ (0322) 2 03 03
(010) 28 10 66
Ֆաքս (0322) 2 02 02,
(010) 28 10 66

Թիվ՝ 71/5 - 8398
<<13>> սեպտեմբերի 2012թ.

Հելսինկյան քաղաքացիական
Ասամբլեայի Վանաձորի
Գրասենյակի նախագահ
ԱՐԹՈՒՐ ՍԱՔՈՒՆՑԻՆ

Հայտնում եմ, որ 09.09.2012թ. ժամը 21:17-ին <<News.am>> ինտերնետային կայք էջում <<Իրավապաշտպանները շարունակում են ահազանգել ընտրախախտումների մասին>> վերնագրով Ձեր կողմից տրված հաղորդագրության հիման վրա ոստիկանության Վանաձորի բաժնում նախապատրաստվում են նյութեր:

Անհրաժեշտությունից ելնելով առաջարկում եմ հիշյալ հոդվածում հրապարակված փաստերի վերաբերյալ խախտումներ հայտնաբերած դիտորդներին 14.09.2012թ. ժամը 16:00-ին ներկայանալ ոստիկանության Վանաձորի բաժնի հետաքննության բաժանմունքի պետ Ա.Սարգսյանի մոտ՝ բացատրություն տալու:

Միաժամանակ խնդրում եմ ներկայացնել վերոհիշյալ դեպքերը հաստատող փաստարկները:

Պետ, ոստիկանության գնդապետ՝ *Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ*

Կատ.՝ Ս.Սարգսյան
Հեռ.՝ /0322/6-75-00

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am

Ե/2012- 14.09/ 305
14.09.2012 թ.

ՀՀ ոստիկանության Վանաձորի բաժնի
հետաքննության բաժանմունքի
պետ Ա. Սարգսյանին

Հարգելի պարոն Սարգսյան

Հայտնում եմ Ձեզ այն մասին, որ 2012 թ. սեպտեմբերի 9-ին կազմակերպության կողմից իրականացվել է Վանաձոր քաղաքում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների դիտորդական առաքելություն:

Դիտորդական առաքելություն իրականացրած դիտորդները արձանագրել են բազմաթիվ խախտումներ, որը հրապարակվել է կազմակերպության www.http://hcav.am/ էլեկտրոնային էջում:

Կազմակերպության կողմից հրապարակած խախտումների մի մասի վերաբերյալ առկա են տեսաձայնագրություններ և լուսանկարներ, որոնք էլեկտրոնային կրիչով ներկայացվում եմ:

Ինչ վերաբերվում է ընտրատեղամասերում խախտումներ արձանագրած դիտորդների հարցաքննությանը, ապա կազմակերպությունը նպատակահարմար չի գտնում նյութերի նախապատրաստման փուլում դիտորդների հարցաքննություն, քրեական գործի հարուցելուց հետո խախտումներ արձանագրած բոլոր դիտորդները կներկայանան հարցաքննության:

Կից ներկայացնում եմ արձանագրված խախտումների տեսաձայնագրությունները և լուսանկարները էլեկտրոնային կրիչով:

Հարգանքներով
կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

Կատարող՝ Ա. Զալյան
azalyan@hcav.am

ՀՔԱ Վանաձոր
HCA Vanadzor
06926924

1

14.09.2012

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՎԱՆԱՁՈՐԻ ԲԱԺԻՆ

2001. ՀՀ ք. Վանաձոր, Մխիթար Գոշի փող. թիվ 3
(0322) 2 03 03
(0322) 2 02 02
(010) 28 10 66
Ֆաքս (0322) 2 02 02

Թիվ՝ 71/5 - 8561

<< 20 >> սեպտեմբերի 2012թ.

Հելսինկյան քաղաքացիական
Ասամբլեայի Վանաձորի
Գրասենյակի նախագահ
ԱՐԹՈՒՐ ՍԱՔՈՒՆՑԻՆ

Հայտնվում է, որ WWW.NEWS.AM. Ինտերնետային կայքէջում տպագրված, Ձեր գրասենյակից ստացված հաղորդագրության հիման վրա, որ Վանաձոր համայնքի ՏԻՄ ընտրությունների ընթացքում ընտրատեղամասերի քվեախցիկները ստվարաթղթից են և անձնագրերում դրվող դրոշմակնիքի թանաքը շուտ օքսիդանում է, նախապատրաստված նյութերով մերժվել է քրեական գործի հարուցումը:

ՈՒղարկում եմ մերժման որոշման մեկ օրինակը, որին համաձայն չլինելու դեպքում այն ստացման պահից յոթօրյա ժամկետում կարող եք բողոքարկել վերադաս դատախազին կամ դատարան:

Առդիր որոշումը << 1 >> թերթ:

Պետ, ոստիկանության գնդապետ՝ *Ա.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ*

Կատ.՝ Ա.Սարգսյան
Հեռ.՝ /0322/6-75-00
/077/11-19-76

<<Հաստատում եմ>>
Ոստիկանության Վանաձորի բաժնի
պետ, ոստիկանության գնդապետ՝
Ա.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
<<19>> սեպտեմբերի 2012 թ.

Որոշում
Քրեական գործի հարուցումը մերժելու մասին

<< 19 >> սեպտեմբերի 2012թ. ք. Վանաձոր

Ոստիկանության Վանաձորի բաժնի Հետաքննության բաժանմունքի պետ, ոստիկանության մայոր Ա.Սարգսյանս ուսումնասիրելով ՀՔԱ Վանաձորի գրասենյակից <<NEWS.am.>> ինտերնետային կայք էջում տպագրված հաղորդագրության վերաբերյալ նախապատրաստված նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

2012 թվականի սեպտեմբերի 9-ին ժամը 14:00-ին ՈԼՄՎ հերթապահ մասից ոստիկանության Վանաձորի բաժին հաղորդում է ստացվել, որ Վանաձոր համայնքի ՏԻՄ ընտրությունների դիտորդություն իրականացնող ՀՔԱ Վանաձորի գրասենյակը <<NEWS.am.>> ինտերնետային կայք էջին հայտնել է, որ ընտրատեղամասերի քվեախցիկները ստվարաթղթից են, որն անհարմարություն է ստեղծում, ընտրություն կատարելիս ճկվում է և քվեաթերթիկները սխալ նշելու պատճառ կարող է հանդիսանալ, և որ թիվ 30/07, 30/11, 30/13, 30/38, 30/42, 30/52 ու 30/56 ընտրատեղամասերում դիտորդների կողմից արձանագրվել է, որ անձնագրում դրվող կնիքները չի պահպանվում, մոտ մեկ ժամ անց ցնդում է:

Վերոգրյալների կապակցությամբ նյութերի նախապատրաստման ընթացքում համապատասխան գրություն է ուղարկվել թիվ 30 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով, որտեղից թիվ Ե-52 գրությամբ ստացվել է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի պարզաբանումը այն մասին, որ ստվարաթղթե քվեախցիկները խնդիրներ չեն կարող առաջացնել և նման խնդիր չի կարող առաջանալ, իսկ դրոշմակնիքների թանաքի օքսիդացման դեպքեր եղել են և խնդիրն արագ վերացվել է:

Վերոգրյալները հիմնավորվել են Կարապետ Թադևոսյանի, Անահիտ Խանզադյանի, Անահիտ Խաչատրյանի բացատրություններով և նյութերում առկա այլ փաստաթղթերով:

Այսպիսով՝ Վանաձորի ՏԻՄ ընտրությունների ընթացքում, ինչպես նաև դրանից հետո որևէ ընտրատեղամասից կամ որևէ քաղաքացուց ստվարաթղթե քվեախցիկի ճկունության պատճառով սխալ ընտրություն կատարելու մասին որևէ տեղեկություն չի ստացվել, իսկ դրոշմակնիքի թանաքի օքսիդացման խնդիրն արագ արձագանք է ստացել և լուծվել է հիշյալ խնդիրը, ոստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 35 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 185 հոդվածի պահանջներով.

ՈՐՈՇԵՑԻ

1.Վանաձորի ՏԻՄ ընտրությունների ընթացքում ստվարաթղթե քվեախցիկների և դրոշմակնիքների թանաքի օքսիդացման վերաբերյալ նախապատրաստված նյութերով մերժել քրեական գործի հարուցումը՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով:

2.Որոշման մեկ օրինակը նյութերի հետ միասին ուղարկել Լոռու մարզի դատախազին՝ մերժման օրինականությունը ստուգելու համար:

-2-

3. Որոշման մեկ օրինակն ուղարկել ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ղեկավար Արթուր Սաքունցին՝ միաժամանակ նրան պարզաբանելով որոշման բողոքարկման կարգը:

ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՊԵՏ՝ Ա. Ս Ա Ր Գ Ս Յ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ԿԱՐՉՈՒԹՅԱՆ
ՎԱՆԱՁՈՐԻ ԲԱԺԻՆ

2001. ՀՀ ք. Վանաձոր, Մխիթար Գոշի փող. թիվ 3
(0322) 2 03 03
(0322) 2 02 02
(010) 28 10 66
Ֆաքս (0322) 2 02 02

Թիվ՝ 71/5 - 8559

<< 20>> սեպտեմբերի 2012թ.

Հելսինկյան քաղաքացիական
Ասամբլեայի Վանաձորի
Գրասենյակի նախագահ
ԱՐԹՈՒՐ ՍԱՔՈՒՆՑԻՆ

Հայտնվում է, որ WWW.NEWS.AM. Ինտերնետային կայքէջում տպագրված, Ձեր գրասենյակից ստացված հաղորդագրության, հիման վրա որ <<Իրավապաշտպանները շարունակում են ահազանգել ընտրախախտումների մասին>>, նախապատրաստված նյութերով մերժվել է քրեական գործի հարուցումը:

Ուղարկում եմ մերժման որոշման մեկ օրինակը, որին համաձայն չլինելու դեպքում այն ստացման պահից յոթօրյա ժամկետում կարող եք բողոքարկել վերադաս դատախազին կամ դատարան:

Առդիր որոշումը << 4>> թերթ:

Պետ, ոստիկանության գնդապետ Ա.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Կատ.՝ Ա.Սարգսյան
Հեռ.՝ /0322/6-75-00
/077/11-19-76

<<Հաստատում եմ>>
Ոստիկանության Վանաձորի բաժնի
պետ, ոստիկանության գնդապետ՝
Ա.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
<<19>> սեպտեմբերի 2012թ.

Որոշում
Քրեական գործի հարուցումը մերժելու մասին

<<19>> սեպտեմբերի 2012թ. ք. Վանաձոր

Ոստիկանության Վանաձորի բաժնի Հետաքննության բաժանմունքի պետ, ոստիկանության մայոր Ա.Սարգսյանս ուսումնասիրելով << Իրավապաշտպանները շարունակում են ահազանգել ընտրախախտումների մասին>> <<NEWS.am.>> ինտերնետային կայք էջում տպագրված հաղորդագրության վերաբերյալ նախապատրաստված նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

2012 թվականի սեպտեմբերի 9-ին ժամը 21:55-ին ՈԼՄՎ հերթապահ մասից ոստիկանության Վանաձորի բաժին ստացվել է ՀՔԱ Վանաձորի գրասենյակից www.<<NEWS.am.>> ինտերնետային կայք էջին տրված հաղորդագրություն այն մասին, որ Վանաձորի թիվ 30/46 ընտրատեղամասի մոտակայքում կայանված մեքենայից ընտրողներին հորդորել են քվեարկել Սամվել Դարբինյանի օգտին, թիվ 30/31 տեղամասում արձանագրվել են բաց քվեարկության մի շարք դեպքեր, թիվ 30/35 տղամասում քվեարկության ծրարները դրված են եղել պատուհանին և հանձնաժողովի նախագահը պատճառաբանել է, թե չիրկիզվող պահարանը փոքր է եղել և չի տեղավորվել, թիվ 30/32 տեղամասում քաղաքապետի թեկնածու Տարոն Ապրեսյանի շտաբից հայտնել են, որ կոնֆլիկտ է առաջացել թեկնածուի վստահված անձի և հանձնաժողովի նախագահի միջև, նույն շտաբից հայտնել են, որ Լոռու մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ Արմեն Ջանազյանը ընտրելուց հետո մնացել է տեղամասում և ուղորդել ընտրողներին, թիվ 30/11, 30/13, տեղամասերում դիտորդները արձանագրել են, որ քվեասենյակի պատին փակցված է Սերժ Սարգսյանի նկարը և հաշվի առնելով Սերժ Սարգսյանի հրապարակային աջակցությունը քաղաքապետի թեկնածու Սամվել Դարբինյանին, այն կարող է ուղղորդող նշանակություն ունենալ, թիվ30/46 տեղամասում դիտորդն արձանագրել է, որ միջանցքում կանգնած մի կին ցուցակագրել է, թե ովքեր են եկել ընտրության, թիվ 30/47 տեղամասում դիտորդն արձանագրել է, որ Սամվել Դարբինյանի վստահված անձը նստել է հանձնաժողովի ադամների միջև և ընտրացուցակից արտագրել քվեարկած քաղաքացների տվյալները, թիվ 30/47 և 30/57 տեղամասում հանձնաժողովը փորձել է սահմանափակել դիտորդների ազատ տեղաշարժը, իսկ թիվ 30/40 տեղամասի հանձնաժողովի նախագահն ասել է, որ քվեաթերթիկ են հանում և կարուսել անում:

Նյութերի նախապատրաստման ընթացքում կատարված աշխատանքներով և ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումներով թիվ 30/46 ընտրատեղամասի մոտակայքում կայանված մեքենան, որի մեջից անընդհատ ընտրողներին հորդորել են քվեարկել քաղաքապետի թեկնածու Սամվել Դարբինյանի օգտին, չի պարզվել նշված մեքենան և այն անձանց ինքնությունը, ովքեր հորդորել են ընտրողներին քվեարկել Սամվել Դարբինյանի օգտին: Թիվ 30/31 ընտրատեղամասում բաց քվեարկության դեպքերի արձանագրման համար ոստիկանության Վանաձորի բաժին է հրավիրվել նշված ընտրատեղամասի ընտրական հանձնաժողովի նախագահ Թերեզա Ժորիկի Անտոնյանը, սակայն վերջինս հրաժարվել է ներկայանալ և հրաժարվել է որևէ բացատրություն տալ և հեռախոսով հայտնել է, որ թիվ 30/31 տեղամասում բաց քվեարկության դեպքեր չեն արձանագրվել, ընտրությունների ընթացքում որևէ խախտում թույլ չի տրվել և եթե այդպիսիք լինեին, անպայման կգրանցվեր տեղամասային

-2-

ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում, իսկ հիշյալ հանձնաժողովի անդամներՆարինե Անանյանը և Արմինե Խումարյանը բացատրությամբ հայտնել են, որ նման դեպքեր չեն արձանագրվել: Թիվ 30/53 տեղամասում քվեարկության ծրարները չհրկիզվող պահարանից դուրս լինելու հանգամանքի շուրջ պարզաբանումներ է տվել հանձնաժողովի նախագահ Քրիստինե Գասպարյանը և հայտնել, որ իրոք չհրկիզվող պահարանը համեմատաբար փոքր է եղել և վերջինս խորհրդակցելով կենտրոնական ընտրական հանձնաժողովի հետ և քվեաթերթիկները ամբողջությամբ տեղադրվել է չհրկիվող պահարանում, բոլոր կարևոր պարագաները ինչպես նաև դատարկ ծրարների մի մասը, իսկ դրսում մնացած ծրարները հանձնաժողովի անդամների ներկայությամբ հաշվե, կնիքվել և հանձնվե;լ է ծառայություն իրականացնող ոստիկանին, իսկ հաջորդ առավոտյան 09.09.12 թվականին նույնությամբ ստացել ստորագրված և կնիքված դատարկ ծրարները, միաժամանակ ընտրությունների ավարտին օգտագործված և չօգտագործված ծրարների քանակը որևէ տարբերություն չի տվել և ընտրատեղամասում որևէ խախտում թույլ չի տրվել, ինչը հաստատել է նաև հանձնաժողովի անդամ Սարգիս Մելքոնյանը: Թիվ 30/32 տեղամասի հանձնաժողովի նախագահ Էլմիրա Ղազարյանը բացատրությամբ հայտնել է, որ ընտրատեղամասում իր և քաղաքապետի թեկնածու Տարոն Ապրեսյանի վստահված անձի միջև վիճաբանություն տեղի չի ունեցել, խոսակցություն եղել է դրոշմակնիքի օքսիդացման հարցի շուրջ ինչն էլ կարգավորվել է և համապատասխան գրառում կատարվել գրանցամատյանում և այլ որևէ կոնֆլիկտ, իրավախախտում տեղի չի ունեցել, ինչը հաստատել են նաև հանձնաժողովի անդամ Օֆելյա Միրզոյանը, Տարոն Ապրեսյանի վստահված անձ Երվանդ Մատինյանը:

Լոռու մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ Արմեն Ջանազյանը ընտրության օրը առավոտյան իր քաղաքացիական պարտքը կատարել է Վանաձորի թիվ 30/35 ընտրատեղամասում, որից հետո գնացել է իր անձնական գործերով, օրվա մեջ եղել իրենց թաղամասում, որտեղ էլ գտնվում է ընտրատեղամասը: Վերջինիս կողմից որևէ թեկնածուի օգտին ընտրողների հորդորներ չեն եղել և պահպանել է ընտրատեղամասից 50 մետր շառավղով հեռավորությունը և որևէ քարոզչություն չի արել, ինչի վերաբերյալ որևէ տեղեկատվություն չի ստացվել, իսկ Ապրեսյանը բացատրությամբ հայտնել է, որ թիվ 30/32 ընտրատեղամասում իր վստահված անձի և հանձնաժողովի նախագահի միջև վիճաբանություն չի եղել և իր տեղեկացմամբ Արմեն Ջանազյանի կողմից քարոզչություն կամ ուղղորդումներ չեն եղել, ընտրությունների ընթացքում միայն իր շտաբում ահազանգեր են եղել, որ անձնագրերի վրա դրվող դրոշմակնիքի թանաքը օքսիդանում է, ինչի վերաբերյալ ահազանգել է կենտրոնական ընտրական հանձնաժողով և առկա խնդրին արագ լուծում է տրվել:

Ստացված հաղորդագրության հիման վրա զննության են ենթարկվել Վանաձորի թիվ 25 դպրոցի վարչական շենքում գտնվող թիվ 30/11 և 30/13 տեղամասերը և որևէ քվեասենյակում ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի նկարը պատին փակցված չի եղել, այլ ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի նկարը ՀՀ պետական խորհրդանիշի հետ գտնվում է դպրոցի 1-ին հարկի միջանցքում և այն որևէ ուղղորդող նշանակություն չէր կարող ունենալ, քանի որ նախագահական ընտրություններ տեղի չեն ունեցել:

Թիվ 30/46 ընտրատեղամասում դիտորդի կողմից միջանցքում կանգնած կնոջ ինքնությունը, որը ցուցակագրել է, թե ովքեր են եկել ընտրության, ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումներով չի պարզվել:

Թիվ 30/47 և 30/57 ընտրատեղամասերում դիտորդների ազատ տեղաշարժվելուն խոչնդոտներ չեն եղել, միայն ՀՔԱ Վանաձորի գրասենյակի դիտորդը երկու ընտրատեղամասերում էլ մի պահ սահմանված հեռավորությունից մոտ է կանգնած եղել քվեախցիկին, ինչի պատճառով հանձնաժողովների անդամների կողմից դիտողություն է ստացել, իսկ ինչ վերաբերվում է վստահված անձի կողմից հանձնաժողովի անդամների միջև նստելուն, ապա ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2012 թվականի << Վստահված

3-

անձանց համար ուսումնական ձեռնարկի >> համաձայն՝ ընտրողների գրանցման և ընտրողներին քվեաթերթիկներ, քվեարկության ծրարներ հատկացնող անդամների աշխատատեղերից յուրաքանչյուրի միջև նախատեսվում է առնվազն 1 աշխատատեղ վստահված անձի համար:

Թիվ 30/40 ընտրատեղամասային հանձնաժողովի նախագահ Մանանա Կարախանյանը հրավիրվել է ոստիկանություն պարզաբանումներ տալու, թե ինչպես են ընտրատեղամասում << կարուսել>> կատարել, ովքեր և այն ինչ ազդեցություն են ունցել քվեարկության արդյունքների վրա, սակայն վերջինս կտրականապես հրաժարվեց ներկայանալ և բացատրություն տալ, նույնիսկ հրաժարվեց բանավոր պատասխանել հարցադրումներին ու նյութերի նախապատրաստման ընթացքում վերոգրյալների կապակցությամբ տեղեկություններ ձեռք չեն բերվել:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակից ստացված տեսաձայնասկավառակի զննությամբ պարզվել է, որ թիվ 30/54 ընտրատեղամասում մի կին ընտրում է կույր կնոջ փոխարեն: Պարզվել է, որ Վանաձոր քաղաքի Տարոն-2 ՔՇՀ-4 28/1 բնակարանի 1-ին կարգի հաշմանդամության թոշակառու Ազգանոշ Խաչատրյանի խնդրանքով վերջինիս փոխարեն, համապատասխան գրանցում ստանալուց հետո, քվեարկության կատարել է հարևանուհին՝ Իրինա Գևորգյանը, ինչով ընտրական օրենսգրքի որևէ նորմ չի խախտվել, քանի որ համաձայն ՀՀ ընտրական օրենսգրքի 65-րդ հոդվածի 4-րդ կետի << քվեաթերթիկն ինքնուրույն լրացնել հնարավորություն չունեցող ընտրողն իրավունք ունի հանձնաժողովի նախագահին տեղեկացնելուց հետո քվեարկությոն խցիկ հրավիրելու այլ անձի, որը չպետք է լինի ընտրական հանձնաժողովի անդամ, վստահված անձ >>: Նշված հանգամանքը հիմնավորվել է նաև թիվ 30/54 ընտրատեղամասի հանձնաժողովի նախագահ Սուսաննա Դարբինյանը բացատրությամբ այն մասին, որ նշված անձի կողմից կույր կնոջ փոխարեն քվեարկությունը կատարվել է օրենքով սահմանված կարգով և իր թույլտվությամբ:

Ներկյացված սկավառակի վրա ձայնագրված քաղաքապետի թեկնածու Տարոն Ապրեսյանի իրավախորհրդատու Զարուհի Կարապետյանի հարցազրույցի հետ կապված վերջինիս ոստիկանություն հրավիրելու և մանրամասներ պարզելու նպատակով ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ և պարզվել է, որ վերջինս բուժման նպատակով գտնվում է Երևան քաղաքում, իսկ 19.09.2012 թ-ին Վանաձոր համայնքի ղեկավարի թեկնածու Տարոն Ապրեսյանը ներկայացել է ոստիկանություն և Զարուհի Կարապետյանի հարցազրույցի շուրջ տվել բացատրությունը:

Նշված տեսաձայնասկավառակի վրա առկա լուսանկարներով ոստիկանություն հրավիրվել են 0490Լ, 0456 Լ, 0517S, 0564Լ հաշվառման համարանիշի << Գազել >> մակնիշի միկրոավտոբուսների վարորդները և տվել բացատրություններ: Նյութերի նախապատրաստմամբ և ձեռնարկված միջոցառումներով վերջիններիս կողմից ընտրատեղամասեր ընտրողների տեղափոխման դեպքեր, որևէ թեկնածուի օգտին քարոզչություն կամ ալ ձևով նպաստելու դեպքեր չեն հայտնաբերվել:

Վերոգրյալները հիմնվորվել են Էլմիրա Ղազարյանի, Արմեն Ջանազյանի, Մարինե Հովակիմյանի, Սիլվա Անտոնյանի, Գայանե Հարությունյանի, Էդվարդ Սարդարյանի, Քրիստինե Գասպարյանի, Թագուհի Դարբինյանի, Աիդա Պետրոսյանի, Սիրվարդ Ճաղարյանի, Իրինա Գևորգյանի, Ազգանուշ Խաչատրյանի, Գևորգ Տոնոյանի, Էդիկ Քեշիշյանի, Տարոն Ապրեսյանի, Երվանդ Մատինյանի, Օֆելյա Միրզոյանի, Սուրեն Հարությունյանի, Սարգիս Մելքոնյանի, Աշոտ Սարգսյանի, Էմմա Ղամբարյանի, Աշոտ Պետրոսյանի, Մեսրոպ Էվոյանի, Նարինե Անանյանի, Արմինե Ղումարյանի բացատրություններով, տեսաձայնասկավառակի, դեպքի վայրի զննության մասին արձանագրություններով և նյութերում գտնվող այլ փաստաթղթերով:

-4-

Այսպիսով՝ նյութերի նախապատրաստմամբ ընտրախախտումների և ընտրությանը մասնակցող անձանց լիազորությունների իրականացմանը խոչնդոտելու դեպքեր չեն հայտնաբերվել, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 185-րդ հոդվածի պահանջներով.

ՈՐՈՇԵՑԻ

1.<< Իրավապաշտպանները շարունակում են ահազանգել ընտրախախտումների մասին >> <<NEWS.am.>> ինտերնետային կայք էջում տպագրված հաղորդագրության վերաբերյալ նախապատրաստված նյութերով մերժել քրեական գործի հարուցումը՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով:

2.Որոշման մեկ օրինակը նյութերի հետ միասին ուղարկել Լոռու մարզի դատախազին՝ մերժման օրինականությունը ստուգելու համար:

3.Որոշման մեկ օրինակն ուղարկել ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ղեկավար Ա.Սաքունցին՝ պարզաբանելով որոշման բողոքարկման կարգը:

ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՊԵՏ՝ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ»

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001,

Հայաստանի Հանրապետություն,

հեռ. **(+374 322) 4 22 68**; ֆաքս: **(+374 322) 4 12 36,**

Ինտերնետային կայքէջ: **www.hcav.am**, էլ. Փոստ: **hcav@hcav.am**